



ԻՊԱՍ ԶԵԿՈՒՅՑ.ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԴԵՄ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Երևան, 2022թ.



Մույն զեկույցը պատրաստվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Դատական բարեփոխումների խթանում. հանրային կառավարման որակի բարելավում. արդյո՞ք նոր Հայաստանը նոր իրականություն է ստեղծում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվել է ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի (NED) ֆինանսավորմամբ:

Զեկույցի բովանդակությունը և արտահայտված տեսակետները, կարծիքները պատկանում են «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ին ու զեկույցի հեղինակներին և պարտադիր չէ, որ համընկնեն ԱՄՆ Ժողովրդավարության ազգային հիմնադրամի տեսակետների հետ:

Մույն զեկույցի հեղինակներն են՝ Աննա Մելիքյանը, Նինա Հակոբյանը, Անահիտ Մկրտչյանը, Արաքս Մելքոնյանը:

Դատական ակտերի ուսումնասիրության և տեղեկատվության հավաքագրմանը աջակցել են Կարինե Ավանեսյանը, Վանատուր Շերենցը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՍՓՈՓԱԳԻՐ.....4

1. ԴԻՏԱՐԿՎԱԾ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....5

2. ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ.....7

2.1 Սանիտարական, սանիտարահիգիենիկ և սանիտարահակահամաճարակային կանոնները և նորմաները (բացի սննդամթերքի անվտանգության ոլորտի և մթնոլորտային օդի պահպանության կանոններից և նորմաներից), հիգիենիկ նորմատիվները խախտելը /ՎԻՎ օրենսգրքի 42-րդ հոդված/..... 7

2.2 Դեղերի շրջանառության ոլորտի պահանջները խախտելը /Վարչական իրավախախտումների վերաբերյալ (ՎԻՎ) ՀՀ օրենսգիրք, հոդված 47.3/..... 14

2.4 Ընկերության միջոցների հաշվին աշխատողի պարտադիր բժշկական զննում. «վտանգավոր եվ վնասակար գործոն» հասկացությունների պարզաբանում..... 25

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ26

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել են 2019թ. և 2020թ. ՀՀ վարչական դատարան մուտքագրված և մինչև 2020թ. հունիսի 30-ը կայացված վճիռներից Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի դեմ բերված հայցերով՝ 30 վճիռներ:

Դիտարկված գործերից 15-ով (50%) հայցերը բավարարվել են, իսկ 15-ով՝ մերժվել (50%): Դիտարկված գործերի ճնշող մեծամասնության դեպքում հայցվորները եղել են առևտրային կազմակերպությունների տնօրեններ և վիճարկել են նշանակված վարչական տույժերը: Դիտարկված գործերի զգալի մեծամասնության դեպքում՝ 80%-ից ավելի, կողմերը ապահովել են մասնակցությունը դատական նիստերին:

Դիտարկված գործերով բերվել են սանիտարական, սանիտարահիգիենիկ և սանիտարահակահամաճարակային կանոնների և նորմաների, հիգիենիկ նորմատիվների խախտման համար նշանակված վարչական տույժ նշանակելու մասին որոշումներն անվավեր ճանաչելու պահանջներ, դեղերի շրջանառության ոլորտի պահանջների խախտման համար նշանակված վարչական տույժ նշանակելու մասին որոշումներն անվավեր ճանաչելու պահանջներ, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու կանոնների խախտման համար վարչական տույժ նշանակելու մասին որոշումներն անվավեր ճանաչելու պահանջներ, ինչպես նաև աշխատողի պարտադիր բժշկական զննման հետ կապված պահանջ:

Ուսումնասիրության արդյունքում արձանագրվել են համակարգային խնդիրներ, այդ թվում՝ վարչարարության հետևյալ խնդիրները՝ վարչական իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու համար սահմանված երկամսյա ժամկետի խախտումներ, լսված լինելու իրավունքի, այդ թվում՝ արձանագրության կազմված չլինելու, ստորագրված չլինելու, լուսմներ չանցկացնելու խնդիրներ, գործի փաստական հանգամանքների լրիվ, օբյեկտիվ, բազմակողմանի հետազոտության խնդիր (վարչական մարմինը չի ուսումնասիրել հայցվորի օգտին ապացույցները) և այլն:

Դատարանը հիմնականում բավարարել է դեղերի շրջանառության ոլորտի պահանջների խախտման վերաբերյալ հայցերը: Իսկ որոշ հարցերով Դատարանը միասնական մոտեցում չի ցուցաբերել: Դիտարկված գործերով նկատվել է նաև Դատարանի հակասական պրակտիկան հետևյալ հարցերի համատեքստում՝ վարչական իրավախախտման համար վարչական տույժի նշանակման համար սահմանված երկամսյա ժամկետի հաշվարկի մեկնարկի պահի վերաբերյալ, այդ թվում՝ ՎԻՎ օրենսգրքի վերաբերելի՝ 47.1, 47.3 հոդվածների հիմքով վարչական իրավախախտումը առանց համապատասխան ստուգումներ կատարելու հայտնաբերելու հնարավորության, ինչպես նաև վարչական իրավախախտման համար նշանակվող տույժի համաչափությունը որոշելու հարցի վերաբերյալ և այլն: Բացի այդ, վարչական տույժը վիճարկելու գործերի մի մասով Դատարանը գտել է, որ հայցվորն ազատված է պետական տուրքը վճարելու պարտականությունից, իսկ նմանատիպ այլ գործերով՝ ոչ:

1. ԴԻՏԱՐԿՎԱԾ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել են 2019թ. և 2020թ. դատարան մուտքագրված և մինչև 2020թ. հունիսի 30-ը կայացված վճիռներից Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի դեմ բերված հայցերով 30 վճիռներ:

Դիտարկված 30 գործերից 27-ով (90%) հայցը բերվել է առևտրային կազմակերպության տնօրենի կողմից՝ վիճարկելու նշանակված վարչական տույժը և/կամ կարգադրագիրը: Մնացած երեք գործերից 2-ով (7%) հայցվորը հանդիսացել է ֆիզիկական անձ, որը վարչական տույժի է ենթարկվել ախտաբանաանատոմիական հերձման կարգը չպահպանելու համար, իսկ 1 գործով (3%) հայցվորը եղել է անհատ ձեռնարկատեր:

Դիտարկված գործերն առնչվել են.

- սանիտարական, սանիտարահիգիենիկ և սանիտարահակահամաճարակային կանոնների և նորմաների, հիգիենիկ նորմատիվների խախտման համար նշանակված վարչական տույժ նշանակելու մասին որոշումներն անվավեր ճանաչելու պահանջների (ՎԻՎ, ՀՀ օրենսգրքի 42-րդ հոդված) (14 գործ կամ 47%),

- դեղերի շրջանառության ոլորտի պահանջների խախտման համար նշանակված վարչական տույժ նշանակելու մասին որոշումներն անվավեր ճանաչելու պահանջներին (ՎԻՎ, ՀՀ օրենսգրքի 47.3-րդ հոդված) (13 գործ կամ 43%),

- բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու կանոնների խախտման համար նշանակված վարչական տույժ նշանակելու մասին որոշումներն անվավեր ճանաչելու պահանջներին (ՎԻՎ, ՀՀ օրենսգրքի 47.1-ին հոդվածի 2-րդ մաս) (2 գործ կամ 7%),

- աշխատողի պարտադիր բժշկական զննման հետ կապված հարցին (1 գործ կամ 3%):

Դիտարկված գործերից 15-ով հայցերը բավարարվել են (50%), որից 14-ով՝ ամբողջությամբ, իսկ 15-ով՝ մերժվել (50%):

Գործերից 2-ով մասով գործի վարույթը կարճվել է, որից 1-ով՝ վեճն ըստ էության սպառվել է, իսկ 1-ով՝ բացահայտվել է հայցադիմումի ընդունումը մասով մերժելու հիմք:

Գործերից 23-ով (77 %) գործի քննության ընթացքում հայցվորն ունեցել է փաստաբան ներկայացուցիչ, որից 3-ով (10 %)՝ ներկայացուցչի անունն առկա է փաստաբանների ցանկում, սակայն վճռում նշված չէ: 7-ով (23 %)՝ ներկայացած է եղել իրավաբանական անձի տնօրենը, հենց ինքը անհատ ձեռնարկատերը կամ աշխատակիցը:

Հայցվորն անձամբ կամ ներկայացուցչի միջոցով դատավարությանը մասնակցել է (ներկա է գտնվել) 24 գործով (80 %), իսկ պատասխանողը՝ 26 գործով (87 %): Բոլոր 4 գործերը, որոնցով պատասխանողը չի ապահովել մասնակցությունը դատաքննությանը, վերաբերել են սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները խախտելու խնդրին:

9 գործով (30 %) հայցադիմումը վերադարձվել է, որից 1 գործով՝ 2 անգամ: Հայցադիմումներն առաջին անգամ վերադարձվել են հետևյալ հիմնավորումներով. հայցադիմումին կից չեն ներկայացվել փաստաթղթեր, հայցադիմումը ստորագրված չի եղել, կամ այն ստորագրել է ստորագրելու լիազորություն չունեցող անձը, հայցի հիմքի, առարկայի, տեսակի փոփոխման կամ լրացման համար և այլ հիմնավորումներով:

Դիտարկված գործերից մեկով¹ վարչական տույժ նշանակելու մասին որոշումը անվավեր ճանաչելու պահանջով հայցը վերադարձվել է, քանի որ այն բերվել է և՛ տնօրենի, և՛ առևտրային կազմակերպության անունից: Դատարանն արձանագրել է, որ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (ՍՊԸ) մասով հայցադիմումի ընդունումը ենթակա է մերժման, իսկ տնօրենի մասով՝ հայցադիմումը ենթակա է վերադարձման՝ ստորև բերված հիմնավորումներով. «...հայցադիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում Դատարանն արձանագրում է, որ հայցադիմումում բերված տեղեկությունների համաձայն՝ վիճարկվող վարչական ակտով վարչական տույժ է կիրառվել ՍՊԸ-ի տնօրենի, այսինքն՝ ֆիզիկական անձի նկատմամբ: Այսինքն՝ վարչական ակտի հասցեատերը տնօրենն է, սակայն հայցադիմումում որպես հայցվոր նշված է նաև ՍՊԸ-ն»: Դատարանն ընդգծել է, որ ֆիզիկական և իրավաբանական անձինք իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ են, հետևաբար իրավաբանական անձի տնօրենի նկատմամբ կայացված վարչական ակտը չի առնչվում իրավաբանական անձի իրավունքներին՝ անկախ այն հանգամանքից, որ վարչական տույժի ենթարկված անձը տվյալ իրավաբանական անձի տնօրենն է: Նույն տրամաբանությամբ Դատարանը գտել է, որ ՍՊԸ-ի մասով հայցադիմումը ներկայացրել է դրա իրավունքն ակնհայտորեն չունեցող անձը:

1 գործով հայցվորները ներկայացրել են բացթողնված ժամկետը հարգելի համարելու միջնորդություն: Միջնորդությունը Դատարանի կողմից թողնվել է առանց քննարկման, քանի որ գործում առկա ապացույցների՝ դատավարական ժամկետ բաց չի թողնվել:

Դատարանը հայցը վարույթ ընդունելիս վարչական վարույթի նյութերը պատասխանողից պահանջելու մասին որոշում կայացրել է 17 գործով (57%):

Դիտարկված գործերի քննության շրջանակներում հիմնականում նշանակվել է 3 դատական նիստ: Մասնավորապես 3 դատական նիստ՝ 14 գործով (47 %), 2 դատական նիստ՝ 4 գործով (13 %), 4 դատական նիստ՝ 4 գործով (13 %), 5 դատական նիստ՝ 5 գործով (17 %), և 5-ից ավելի դատական նիստ՝ 3 գործով (10 %): 5-ից ավելի դատական նիստով գործերից մեկը վերաբերել է ախտաբանաանատոմիական հերձումների անցկացման կարգի խախտմանը, 1-ը՝ ՀՀ-ում չգրանցված դեղերի ներմուծելու, պահելու, իրացնելու կարգի խախտմանը, ևս 1-ը՝ անիտարական կանոնների և նորմերի պահանջների խախտմանը:

Դիտարկված գործերի տևողությունը վարույթ ընդունելու պահից մինչև վճռի հրապարակումը հիմնականում եղել է 3-7 ամիս, 3 գործով՝ մեկ տարի 3 ամիս², որը վերաբերել է սանիտարական կանոնների և նորմերի պահանջները խախտելուն:

¹ ՎԴ/5768/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936006

² ՎԴ/8761/05/18, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809925521

Վճռում, բացի օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերից, Դատարանը հիմնականում հղում է կատարել Վճռաբեկ դատարանի որոշումներում արտահայտված դիրքորոշումներին (10 գործով), ՀՀ սահմանադրությանը (6 գործով), Սահմանադրական դատարանի որոշումներին (4 գործով), միջազգային պայմանագրերին /ՄԻԵԿ/ (2 գործով), ՄԻԵԴ նախադեպերի (1 գործով):

Դիտարկված գործերից 21-ով Դատարանը գտել է, որ հայցվորն օրենքի ուժով ազատված է պետական տուրքը վճարելուց: Պետք է նշել, որ այդ հարցում դատական պրակտիկան միասնական չէր: Դիտարկված որոշ գործերով հայցվորը՝ առևտրային կազմակերպության տնօրենը վիճարկել է նշանակված վարչական տույժը, ազատված է եղել պետական տուրքը վճարելուց³, իսկ նմանատիպ հանգամանքներով նույն կարգավիճակն ունեցող հայցվորները՝ ոչ⁴:

2. ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐ.

2.1 Սանիտարական, սանիտարահիգիենիկ և սանիտարահակահամաճարակային կանոնները և նորմաները (բացի սննդամթերքի անվտանգության ոլորտի և մթնոլորտային օդի պահպանության կանոններից և նորմաներից), հիգիենիկ նորմատիվները խախտելը /ՎԻՎ օրենսգրքի 42-րդ հոդված/.

Նշված խնդրով դիտարկված 14 գործերից միայն 5-ն (17%) է բավարարվել, մնացածը՝ մերժվել: Բոլոր հայցերը բերվել են առևտրային կազմակերպությունների տնօրենների կողմից:

Նշված զանցակազմի համատեքստում քննարկվել են աղմուկի նորմատիվները խախտելու, սանիտարական նորմերի պահպանման խնդիրներ գազալցակայաններում և այլն: Դիտարկված բոլոր գործերով տեսչական մարմինը հարուցված վարչական վարույթի շրջանակներում իրականացրել է գնում, որից հետո կազմել է գնման արձանագրություն (ներ), որի հիման վրա կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և վարչական տույժ նշանակելու մասին որոշումը:

Քննարկվող հարցով հայցերով հայցվորները պնդել են, որ չի ապահովվել իրենց լաված լինելու իրավունքը⁵, այդ թվում նաև՝ հայցվորը մասնակից չի դարձվել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը, ինչի արդյունքում վերջինս զրկվել է վարչական արձանագրությունը կազմելուն մասնակցելու, արձանագրության բովանդակության առթիվ բացատրություններ և դիտողություններ ներկայացնելու և իր մյուս

³ Տե՛ս, օրինակ, ՎԴ/12051/05/18, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929022, ՎԴ/11085/05/19 http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809941698, ՎԴ/10928/05/18, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809927831

⁴ Տե՛ս, օրինակ, ՎԴ/2942/05/19 http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932944, ՎԴ/3196/05/19 http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933214; ՎԴ/11707/05/18, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809928679

⁵ Տե՛ս, օրինակ, ՎԴ/2658/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932670

իրավունքներից⁶; զննում չի իրականացվել կամ իրականացվել է՝ առանց կազմակերպության ղեկավարի իմացության; վարչական մարմինը որոշում կայացնելիս հաշվի չի առել այն հանգամանքը, որ իրավախախտումը կատարվել է անզգուշությամբ և առանց հիմնավորման է հայցվորին տուգանել է 60000 դրամի չափով, այլ ոչ թե կիրառել նվազագույն տուգանքի չափը; զննման արձանագրությունը կազմվել է ավելի ուշ՝ այցից հետո, և ստորագրության է ներկայացվել ենթադրյալ իրավախախտին երկու շաբաթ անց: Լսումը չի արձանագրվել⁷; տեսչական մարմնի ղեկավարի Կարգադրագիրը՝ մինչ զննում իրականացնելու արդյունքում արձանագրված թերությունները վերացնելու համար նախատեսված 30-օրյա ժամկետի լրանալը, արդեն իսկ վերացվել են պահանջվող թերությունները, սակայն Պատասխանողը անտեսելով այդ հանգամանքը՝ կայացրել է վարչական տույժ նշանակելու մասին որոշումը⁸; աղմուկի չափումը չի իրականացվել սահմանված կարգով⁹ և այլն:

✓ Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում աղմուկի թույլատրելի չափի գերազանցումը.

Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում աղմուկի թույլատրելի չափի և դրա գերազանցման հետ կապված դատական գործերով հայցվորները ենթարկվել են վարչական տույժի ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասով՝ սանիտարական նորմերի պահանջները խախտելու համար:

Աղմուկի խնդիրը քննարկվել է դիտարկված գործերից երկուսով, որից մեկն է բավարարվել: Դատարանների կողմից հայցն ամբողջությամբ բավարարված գործով¹⁰ հայցվորը նշել է, որ վիճարկվող վարչական ակտում բացակայել են աղմուկի թույլատրելի չափի և դրա գերազանցման տվյալների վերաբերյալ բավարար փաստական տվյալները: Վարչական ակտում նշված արդյունքներն արժանահավատ չեն եղել, քանի որ վարչական ակտում բացակայել են նաև նման արդյունքների ստացման համար օգտագործված հաշվարկային եղանակը, սենյակներում ձայնի առավելագույն և համարժեք մակարդակների համար չափումների կոնկրետ ժամանակը, չափումների քանակը, դրանց իրավական հիմնավորումները, որոնց առկայության պայմաններում միայն կարելի էր հստակ գնահատել խախտման առկայությունը: Մինչդեռ այդ ամենը պետք է մատչելի ձևով արտացոլված լիներ վարչական ակտում, քանի որ վարչական ակտի որոշակիությունը, հասկանալի և հիմնավորված լինելը «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի պահանջն է: Դատարանը պարզել է, որ նշված մասնագետների կողմից բնակարանում աղմուկի մակարդակի գործիքային չափումների իրականացման ընթացքում չեն պահպանվել ՀՀ առողջապահության նախարարի 2002 թվականի մարտի 06-ի թիվ 138 հրամանով հաստատված «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» թիվ 2-111-11.3 սանիտարական նորմերի 1-ին հավելվածով նախատեսված պահանջները, որոնք էական նշանակություն ունեն չափման

⁶ ՎԴ/2942/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932944

⁷ ՎԴ/7638/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809938009

⁸ ՎԴ1/0046/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933293

⁹ ՎԴ/0966/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930840

¹⁰ ՎԴ/0966/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930840

արդյունքների համար, վարչական մարմինն իրականացված վարչական վարույթում չի ապահովել գործի հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ պարզումը, որի արդյունքում կայացվել են ոչ իրավաչափ վարչական ակտեր, ուստի առկա են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի առաջին մասով սահմանված կարգադրագիրը և որոշումն անվավեր ճանաչելու հիմքերը:

✓ Լաված լինելու իրավունքի խախտումը.

Մի շարք գործերով հայցվորները պնդել են, որ չի ապահովվել իրենց լաված լինելու իրավունքը¹¹, այդ թվում նաև՝ հայցվորը մասնակից չի դարձվել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը¹²; գնումն չի իրականացվել կամ իրականացվել է առանց կազմակերպության ղեկավարի իմացության, այսինքն՝ վերջինս կարծիք հայտնելու հնարավորություն չի ունեցել¹³:

Թիվ ՎԴ/11085/05/19 գործով¹⁴ հայցվորը, ի թիվս այլնի, նշել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմվել է օրենքի կոպիտ խախտմամբ: Մասնավորապես՝ հայցվորը մասնակից չի դարձվել վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմմանը, ինչի արդյունքում զրկվել է վարչական արձանագրությունը կազմելուն մասնակցելու, արձանագրության բովանդակության առթիվ բացատրություններ և դիտողություններ ներկայացնելու և իր մյուս իրավունքներից, չի ծանուցվել վարչական վարույթի մասին և մասնակից չի դարձվել վարչական վարույթին, որի հետևանքով խախտվել է իր լաված լինելու իրավունքը: Նշել է, որ ըստ վիճարկվող որոշման՝ ծանուցագրերը և վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը հանձնվել են հայցվորի լիազորված անձին, սակայն որևէ անձ լիազորություն չի ունեցել ստանալու հայցվորին հասցեագրված նամակները: Սույն գործով Դատարանը, հղում կատարելով ՀՀ վճռաբեկ դատարանի ՎԴ/0150/05/16 վարչական գործով 22.03.2019թ. որոշմանը, վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության ուսումնասիրության արդյունքում արձանագրել է, որ վարչական իրավախախտման արձանագրության մեջ առկա չէ Հայցվորի ստորագրությունը, ինչպես նաև գրառում արձանագրությունն ստորագրելուց հրաժարվելու մասին: Ըստ այդմ, Դատարանը եզրահանգել է, որ նշված արձանագրության կազմմանը չի ապահովվել Հայցվորի ներկայությունը (մասնակցությունը), ինչի արդյունքում չեն ապահովվել նաև վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելու գործընթացում իրավախախտի՝ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված իրավունքները (բացատրություններ տալու, վարչական պատասխանատվության վարույթի ընթացքում ունեցած իր իրավունքներին իրազեկվելու, արձանագրության կապակցությամբ դիտողություններ ներկայացնելու իրավունքները): Ընդ որում, Դատարանը նշել է, որ արձանագրությունը հայցվորին ուղարկելու փաստը չի «փոխհատուցում» ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածի խախտումը:

¹¹ Տե՛ս, օրինակ, ՎԴ/2658/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932670

¹² ՎԴ/11085/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809941698

¹³ ՎԴ/4654/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934798

¹⁴ ՎԴ/11085/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809941698

Թիվ ՎԴ/7638/05/19 գործով¹⁵ հայցվորի նկատմամբ պատասխանողի կողմից կայացվել էր վարչական տույժ նշանակելու մասին որոշում, որով հայցվորը սանիտարական նորմերը խախտելու համար՝ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասով ենթարկվել էր վարչական տույժի, սակայն գործով լսմանը որոշում կայացնողը ներկա չէր: Գործով Դատարանը, բավարարելով հայցը, նշել է, որ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 281-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման գործը, մարմինը (պաշտոնատար անձը) գործի վերաբերյալ որոշում է ընդունում(...): Դատարանը եզրակացրել է, որ վարչական իրավախախտման գործը քննում է և գործի վերաբերյալ որոշում ընդունում է վարչական իրավախախտման գործը քննող մարմինը (պաշտոնատար անձը): Մասնավորապես՝ օրենքի ուժով վարչական իրավախախտման որոշումը կայացնում է վարչական իրավախախտման գործը քննողը: Գործի քննությունն ու գործի վերաբերյալ որոշման կայացումը միևնույն անձի կողմից իրականացնելու պահանջը բխում է անձի՝ ՀՀ սահմանադրության 50-րդ հոդվածով սահմանված պատշաճ վարչարարության իրավունքի ապահովման անհրաժեշտությունից, որպիսի իրավունքի տարր է անձի լված լինելու իրավունքը այն դեպքերում, երբ անձի նկատմամբ միջամտող անհատական ակտ ընդունելը: Սույն գործով պատասխանողի կողմից որևէ ապացույց չի ներկայացվել առ այն, որ գործի քննությունն իրականացրել է որոշում ընդունած պաշտոնատար անձը (հայցվորը պնդում է, որ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարը գործի քննություն չի իրականացրել, գործի հանգամանքների վերաբերյալ քննարկումներ իրականացվել են տեսչական մարմնի աշխատակիցների հետ): Դատարանը նաև ընդգծել է, որ վարչական վարույթի ընթացքում կազմակերպված լսումները չեն արձանագրվել, որպիսի պայմաններում խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի պահանջները, ինչը հանգեցրել է հայցվորի՝ ՀՀ սահմանադրությամբ ամրագրված պատշաճ վարչարարության իրավունքի խախտմանը: Դատարանը հաստատված է համարել, որ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարը հայցվորի նկատմամբ վարչական իրավախախտման գործով որոշում կայացնելով՝ հայցվորի համար միջամտող վարչական ակտ ընդունելով չի ապահովել ՀՀ սահմանադրությամբ ամրագրված՝ Հայցվորի լված լինելու իրավունքը:

Սակայն մի շարք գործերով Դատարանն այլ կերպ է գնահատել լված լինելու իրավունքի ապահովման հարցը: Այդպես, թիվ ՎԴ/4316/05/19 գործով¹⁶ հայցվորը պնդել է, որ արձանագրություններում առկա է միայն վարչական մարմնի պաշտոնատար անձի ստորագրությունը, նշված չէ վերջինիս հայրանունը, նշված չեն վկաների մասին տեղեկությունները, ենթադրյալ իրավախախտի մասին տվյալները, նշված չէ նաև ենթադրվող իրավախախտի դիրքորոշումը, կամ դրա բացակայությունը, կամ արձանագրությունները ստանալուց, կամ ստորագրելուց հրաժարվելու մասին նշումները: Դատարանը, անդրադառնալով հայցվորի այն փաստարկին, որ արձանագրությունը չի համապատասխանում ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածով արձանագրությանը ներկայացվող պահանջներին, գտել է, որ նշվածը չի կարող վիճարկվող որոշման անվավերության հիմք հանդիսանալ: Դատարանը նշել է, որ ի տարբերություն նյութական իրավունքի պահանջների խախտման՝ ընթացակարգային՝ արձանագրության կազմման ձևին ներկայացվող պահանջների խախտումը միշտ չէ, որ պետք է անվերապահորեն հանգեցնի

¹⁵ ՎԴ/7638/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809938009

¹⁶ ՎԴ/4316/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934406

վարչական ակտի անվավերության (վերացման): Դատարանը գտնում է, որ ընթացակարգային նորմերի խախտումը կարող է հանգեցնել վարչական ակտի անվավերության, եթե այդ խախտումը ազդել է վիճարկվող վարչական ակտի նյութական իրավաչափության վրա և/կամ դրա հետևանքով խախտվել է շահագրգիռ անձի սուբյեկտիվ իրավունքը կամ ազատությունը: Այլ կերպ ասած՝ նյութական իրավունքի համեմատությամբ ընթացակարգային պահանջներն ունեն օժանդակ գործառույթ, որն արտահայտվում է նրանում, որ ընթացակարգային սխալները որոշիչ չեն, եթե չեն ազդում որոշման նյութական իրավաչափության վրա և չեն խախտում շահագրգիռ անձանց հիմնական իրավունքները: Հայցը մերժվել է:

- ✓ Ախտահանման, կրծողասպան և միջատասպան աշխատանքների կազմակերպման, իրականացման և աշխատողների առողջության պահպանման սանիտարական կանոնները և նորմերը խախտելը.

Թիվ ՎԴ/12051/05/18 գործով¹⁷ հայցվորը ենթարկվել է վարչական տույժի ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասով՝ ՀՀ առողջապահության նախարարի 2010 թվականի հուլիսի 16-ի թիվ 13-Ն հրամանով հաստատված «Ախտահանման, կրծողասպան և միջատասպան աշխատանքների կազմակերպման, իրականացման և աշխատողների առողջության պահպանման» ՄՆ հա. 2.2.5-003-10 սանիտարական կանոնների և նորմերի 2-րդ գլխի 8-րդ կետի պահանջները խախտելու համար, այն է՝ ինժեներատեխնիկական և սանիտարահիգիենիկ միջոցառումներն իրականացվում են բոլոր կազմակերպություններում՝ անկախ կազմակերպաիրավական և սեփականության ձևից, կրծողների համար անհասանելիությունը (հեռավորությունը) ապահովելու, դրանց բազմացման և տարածման նպաստավոր պայմանները (պատերի, հատակների, առաստաղների ճեղքերը, իրերի, ապրանքների անկանոն դասավորվածություն և այլն) վերացնելու համար: Դատարանը մերժել է վարչական ակտի դեմ ներկայացված հայցը՝ նշելով, որ գործում առկա զննման երկու արձանագրություններով արձանագրվել են ընկերության բաժանմունքների շենքերի, պատերի, հատակի և առաստաղի, ինչպես նաև սենյակներում գտնվող իրերի դասավորության այնպիսի պայմաններ, որոնք նպաստավոր են եղել կրծողների բազմացման և տարածման համար, որպիսի իրավիճակն էլ առաջացնում է վերը նշված սանիտարական կանոնների և նորմերի 2-րդ գլխի 8-րդ կետով սահմանված նորմի խախտում:

- ✓ Հասարակական գույքարանների համապատասխանությունը ՀՀ օրենսդրությամբ առաջադրված պահանջներին.

ՀՀ օրենսդրությամբ առաջադրված պահանջներին հասարակական գույքարանների համապատասխանության վերաբերյալ բոլոր գործերով հայցվորները ենթարկվել են վարչական տույժի ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 42-րդ հոդվածի 1-ին մասով՝ սանիտարական, սանիտարահիգիենիկ և սանիտարահակահամաճարակային կանոնները և նորմաները (բացի սննդամթերքի անվտանգության ոլորտի և մթնոլորտային օդի պահպանության կանոններից և նորմաներից), հիգիենիկ նորմատիվները խախտելու համար:

¹⁷ ՎԴ/12051/05/18, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929022

Ավտոգազալցակայաններում և ավտոբենզալցակայաններում հասարակական գուգարանների՝ ՀՀ օրենսդրությամբ առաջադրված պահանջներին համապատասխանության հետ կապված դիտարկված դատական գործերից բավարարվել է միայն մեկը:

Թիվ ՎԴ/4654/05/19 գործով¹⁸, Դատարանի կողմից հայցը բավարարվել է միայն մեկ գործով՝ այն հիմքով, որ ապահովված չի եղել հայցվորի՝ լսված լինելու իրավունքը (գործով փաստական հանգամանքների քննարկում բացարձակապես տեղի չի ունեցել): Դատարանն անդրադարձել է նաև արձանագրությունը անձի ներկայությամբ կազմելու օրենսդրական պահանջի խախտմանը՝ նշելով, որ վերջինը կարևոր երաշխիք է ողջ վարչական վարույթի ընթացքում ենթադրյալ իրավախախտի իրավունքների, այդ թվում՝ արձանագրությունը կազմելիս բացատրություն տալու իրավունքի իրացումն ապահովելու համար: Դատարանն արձանագրել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության մեջ առկա չի եղել հայցվորի ստորագրությունը, ինչպես նաև գրառում արձանագրությունն ստորագրելուց հրաժարվելու մասին: Ըստ այդմ՝ Դատարանը եզրահանգել է, որ նշված արձանագրության կազմմանը չի ապահովվել հայցվորի ներկայությունը (մասնակցությունը), ինչի արդյունքում չեն ապահովվել նաև վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելու գործընթացում իրավախախտի՝ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 255-րդ հոդվածով սահմանված իրավունքները (բացատրություններ տալու, վարչական պատասխանատվության վարույթի ընթացքում ունեցած իր իրավունքներին իրազեկվելու, արձանագրության կապակցությամբ դիտողություններ ներկայացնելու իրավունքները):

✓ *Տուգանքի չափը որոշելիս տեսչական մարմնի հայեցողական լիազորությունների իրացում.*

Դիտարկված դատական գործերով հայցվորները, անդրադառնալով տուգանքի չափը որոշելիս Տեսչական մարմնի հայեցողական լիազորությունների չարաշահման հարցին, նշել են, որ օրենսդիրն այս հոդվածով սահմանել է պատասխանատվության նվազագույն և առավելագույն չափ, այն է՝ նվազագույն աշխատավարձի քառասնապատիկից մինչև հարյուրքսանապատիկի չափով՝ տալով վարչական մարմնին հայեցողական լիազորություն ինքնուրույն սահմանելու տուգանքի չափը: Վկայակոչելով նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, թիվ ՎԴ/6329/05/12 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ նշել են, որ վիճարկվող ակտից անորոշ է, թե ինչ հիմքով է վարչական մարմինը որոշել հայցվորին տուգանելու չափը: Գտել են, որ առաջադրված պատասխանատվությունն անհամաչափ է, քանի որ որևէ ծանրացնող հանգամանք չի մատնանշվել վարչական մարմնի կողմից, որը վերոգրյալ խախտման համար թույլ կտար հայցվորին տուգանել ոչ թե նվազագույն չափով, այլ նվազագույնից ավել:

Այսպես, դիտարկված դատական գործերից երկուսի դեպքում¹⁹ Դատարանները գտել են, որ վարչական մարմինը համակողմանիորեն, լրիվ և օբյեկտիվորեն պարզելով գործի հանգամանքները, կայացրել է վիճարկվող որոշումը՝ հայցվորի նկատմամբ

¹⁸ ՎԴ/4654/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934798

¹⁹ ՎԴ/4316/05/19 http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934406; ՎԴ/4305/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934408

համապատասխան չափի վարչական տուգանք կիրառելով, որպիսի պայմաններում կարելի է փաստել, որ իրականացված վարչարարությունը ուղղված է եղել ՀՀ սահմանադրությամբ և օրենքներով հետապնդվող նպատակին, և դրան հասնելու միջոցները եղել են պիտանի, անհրաժեշտ և չափավոր, հայցերը մերժվել են:

Ի տարբերություն վերը նշված վճիռների, թիվ ՎԴ/4654/05/19 գործով²⁰ Դատարանը, հղում կատարելով ՀՀ սահմանադրական դատարանի 2016թ. հուլիսի 8-ի ՄԴՈ-1291²¹ և ՀՀ սահմանադրական դատարանի 2010թ. հոկտեմբերի 12-ի ՄԴՈ-920²² որոշումներին, նշել է, որ որոշումն ընդունվել է վարչարարության, ինչպես նաև վարչական պատասխանատվության հիմքում ընկած հիմնարար սկզբունքներից մեկի՝ համաչափության սկզբունքի խախտմամբ, վարչական մարմինը սահմանված տույժի և իրավախախտի արարքի միջև համաչափությունն ապահովելու նպատակով չի պարզել և չի քննարկել պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները կամ դրանցից գոնե մեկը: Հայցը բավարարվել է:

✓ Պաշտոնատար անձի հասկացությունը ՎԻՎ օրենսգրքի համատեքստում.

Մերժված դատական գործերից մեկով՝ թիվ ՎԴ1/0046/05/19 գործով²³ հայցվորը նշել է, որ վիճարկվող վարչական ակտն անհիմն է նաև այն պատճառով, որ Ընկերության տնօրենը, չհանդիսանալով պաշտոնատար անձ, Տեսչական մարմնի կողմից վարչական պատասխանատվության է ենթարկվել պաշտոնատար անձի համար նախատեսված վարչական տուգանքի չափով: Դատարանը, մերժելով հայցը, հայցվորի պնդման կապակցությամբ նշել է, որ տվյալ դիտարկումն ու հետևությունը անհիմն են, քանի որ ՀՀ Վճռաբեկ դատարանն իր 2007 թվականի թիվ 3-690 /ՎԴ/ որոշմամբ արդեն իսկ արտահայտել է իրավական դիրքորոշում, ըստ որի՝ *... թեև անհատ ձեռնարկատերերը ձևականորեն որևէ պաշտոն չեն զբաղեցնում, սակայն իրենց գործունեությունն իրականացնելիս նրանք ապահովում են դրա կազմակերպումն ու կառավարումն այնպես, ինչպես դա կիրականացներ նման գործունեությամբ զբաղվող որևէ կազմակերպության իրավասու ղեկավարը՝ պաշտոնատար անձը:* Վերոգրյալ Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշման լույսի ներքո Դատարանը ևս մեկ անգամ հաստատել է Տեսչական մարմնի կողմից հայցվորին վարչական պատասխանատվության ենթարկելու՝ որպես պաշտոնատար անձ իրավաչափ լինելը:

Նմանօրինակ հարց է քննարկվել նաև թիվ ՎԴ/7184/05/19 դատական գործով²⁴, երբ որպես հայցվոր հանդես եկող Բժշկական կենտրոնի տնօրենը պնդել է, որ Բժշկական կենտրոնում գնում էրբեք չի իրականացվել, ՀՀ առողջապահության նախարարի 2008 թվականի հոկտեմբերի 15-ի N 20-Ն հրամանով հաստատված «ՀՀ-ում իմունականխարգելման գործընթացի կազմակերպում և իրականացում» N-3.1.6.009-08 սանիտարահամաճարակային կանոններով և նորմերով սահմանված պահանջների խախտումներ չեն հայտնաբերվել և չէին կարող հայտնաբերվել, նման խախտումներ ենթադրաբար կարող էին լինել այլ հասցեում գտնվող պոլիկլինիկայում: Գտել է, որ սահմանված կանոնների կատարման ապահովումը չի մտնում իր պաշտոնական պարտականությունների մեջ, և Տեսչական մարմնի կողմից

²⁰ ՎԴ/4654/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809934798

²¹ <https://www.concourt.am/armenian/decisions/common/2016/pdf/sdv-1291.pdf>

²² <https://www.arlis.am/documentview.aspx?docID=61436>

²³ ՎԴ1/0046/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809933293

²⁴ ՎԴ/7184/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809937500

արձանագրված ենթադրյալ խախտումները կարող էին կատարվել այլ հասցեում գտնվող պոլիկլինիկայում, որի տնօրենը չի կարող նույնացվել ԲԺՇկական կենտրոնի տնօրենի հետ: Դատարանը գտել է, որ ինչպես վարչական վարույթի ընթացքում, այնպես էլ դատաքննության ընթացքում հայցվորի կողմից ոչ մի հիմնավոր ապացույց չի ներկայացվել առ այն, որ ԲԺՇկական կենտրոնում իրավունքներն ու պարտականությունները բաշխված են, և տվյալ վարչական իրավախախտման համար պատասխանատվություն կրում է մեկ այլ անձ, իսկ վարչական մարմինը տվյալ տեղեկատվության մասին կարող էր իրազեկ դառնալ միայն վերջինիս ներկայացրած տեղեկությունների միջոցով:

2.2 Դեղերի շրջանառության ոլորտի պահանջները խախտելը /Վարչական իրավախախտումների վերաբերյալ (ՎԻՎ) ՀՀ օրենսգիրք, հոդված 47.3/.

Դիտարկված 13 դատական գործերով քննարկվել են ՀՀ-ում չգրանցված կամ գրանցումն օրենքով սահմանված կարգով կասեցված կամ օրենքի խախտմամբ դեղեր ներմուծելու կամ իրացնելու խնդիրներ: Նշված 13 գործերից 9-ը (69%) բավարարվել է: Այս խումբ գործերով արձանագրվել են վարչարարության իրականացման համակարգային խնդիրներ ու բացթողումներ, այդ թվում՝ վարչական պատասխանատվության ենթարկելու ժամկետի պահպանման համատեքստում:

✓ Վարչական տույժ նշանակելու ժամկետների խախտում.

Դեղերի շրջանառության ոլորտի պահանջների խախտման վերաբերյալ գործերով հայցվորները պնդել են, որ տեսչական մարմինը չի պահպանել վարչական պատասխանատվության ենթարկելու օրենսդրությամբ սահմանված ժամկետները: Քանի որ դիսպոզիցիայում թվարկված են մի քանի գործողություններ, իսկ տեսչական մարմինը չի հստակեցրել, թե որ գործողության համար է ենթարկել պատասխանատվության՝ ներմուծելու, թե իրացնելու համար, ապա հայցվորները պնդել են, որ ներմուծման դեպքում տեսչական մարմինը զննում է իրականացրել և տույժ նշանակել վաղեմության ժամկետն անցնելուց հետո: Մասնավորապես, հղում անելով «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասին, հայցվորները նշել են, որ վերը նշված իրավանորմերի համադրված վերլուծությունը ցույց է տալիս, որ ապրանքների ներմուծման գործընթացը ՀՀ այլ պետության տարածքից ապրանքների և տրանսպորտային միջոցների ներսւբերումն է ՀՀ տարածք՝ պետական սահմանը փաստացի հատելու միջոցով: Այսինքն՝ ապրանքների ներմուծման գործընթացն ավարտվում է պետական սահմանը փաստացի հատելու պահից: Իսկ ոլորտային օրենսդրության կարգավորումների համաձայն՝ ներմուծված դեղորայքը ենթակա է գրանցման ներմուծելու օրվանից 5 օրվա ընթացքում: Այսինքն՝ իրավախախտման օր է հանդիսանում ներմուծման օրվա 6-րդ օրը, իսկ վարչական պատասխանատվության ենթարկելու ժամկետը պետք է հաշվարկվի է ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն (վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում):

Մինևույն ժամանակ պատասխանողները պնդել են, որ տվյալ դեպքում գործում է ՎԻՎ օրենսգրքի 37-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված բացառությունն առ այն, որ եթե վարչական իրավախախտումը հնարավոր չէր հայտնաբերել առանց համապատասխան

ստուգումներ կատարելու, ապա վարչական տույժը կարող է նշանակվել վարչական իրավախախտումը ստուգմամբ բացահայտելու օրվանից հետո՝ ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում: Տեսչությունը պնդել է, որ այլ եղանակով տեղեկություններ, այդ թվում՝ պետական մարմինների փոխօգնության միջոցով, ստանալ չի կարող: Այսպիսով, իրավասու վարչական մարմնի կողմից այս կամ այն վարչական իրավախախտման հայտնաբերումն է այն անհրաժեշտ իրավաբանական փաստը, որի հետ օրենսդիրը կապել է այդ խախտման համար վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանքները՝ վաղեմության ժամկետները, սահմանող իրավանորմերով կարգավորվող հասարակական հարաբերությունների ծագումը: Այսպես, օրինակ, թիվ ՎԴ/0688/05/19 գործով²⁵ վիճարկվող որոշման համաձայն՝ վարչական մարմնի կողմից իրավախախտման դեպքի հայտնաբերման փաստը դրսևորվել է հետևյալում. փաստաթղթերի ստուգմամբ, որի մեկնարկը տրվել է վարչական վարույթի շրջանակներում ՀՀ առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գրության և հետագայում հաշիվ ապրանքագրի ստուգմամբ, ինչպես նաև վարչական իրավախախտման փաստը հաստատող կամ հերքող այլ հնարավոր փաստաթղթերի ձեռքբերմանը ուղղված աշխատանքներով, որոնց համադրումից հետո միայն Վարչական մարմինը կարող էր հստակ արձանագրել վարչական իրավախախտման դեպքը: Տեսչական մարմինը նշել է, որ բացակայում են նաև վարչական մարմնի կողմից փոխօգնության կարգով ձեռնարկվելիք միջոցների օգտագործմամբ օրենքի խախտմամբ յուրաքանչյուր անվանում դեղերի ներմուծման արարքը բացահայտելու օրենքով սահմանված հիմքերը, վարչական մարմնի կողմից փոխօգնության կարգով հայցման ենթակա անհրաժեշտ փաստաթղթերում, ինչպիսին են, օրինակ, տրանսպորտային փաստաթղթերում, փաստացի ներմուծված դեղերի քանակների հաշիվ ապրանքագրերում, պարունակվող տվյալները (տեղեկությունները), տվյալ պարագայում դասվում են օրենքով պահպանվող գաղտնիքների շարքին: Նշված իրավակարգավորմամբ պայմանավորված վարչական մարմինը կարող էր վարչական վարույթի շրջանակներում քննարկվող փաստական հանգամանքներին առնչվող վերոնշյալ փաստաթղթերում առկա տվյալներին իրազեկ լինել բացառապես հայցվորի միջոցով, որոնք ձեռք բերելու ուղղությամբ իրականացվել է պատշաճ վարչարարություն՝ հիմք ընդունելով օրենքով սահմանված ապացուցման բեռի բաշխման կանոնակարգումները:

Դիտարկված գործերով Դատարանը միասնական մոտեցում չի ցուցաբերել իրավախախտման համար պատասխանատվության ենթարկելու ժամկետի հաշվարկի հարցում:

Դատարանն արձանագրել է, որ ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ ՀՀ տարածք դեղերի ներմուծման փաստը բացահայտելու համար լրացուցիչ վարչարարական գործողություններ, որոնք կարող են իրենց բնույթով գնահատվել որպես ստուգում, իրականացնելու անհրաժեշտություն չկա: Հետևապես Դատարանն արձանագրել է, որ ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ ՀՀ տարածք դեղերի ներմուծման իրավախախտման համար վարչական պատասխանատվություն սահմանելիս ժամկետների հաշվարկը չի կարող իրականացվել ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 4-րդ պարբերությամբ

²⁵ ՎԴ/0688/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930558

սահմանված կարգով: Նշված իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու ժամկետը պետք է հաշվարկել ընդհանուր կանոններով, այն է՝ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին պարբերությամբ նախատեսված երկամսյա ժամկետը²⁶:

Թիվ ՎԴ/0688/05/19 գործով²⁷ Դատարանը նշել է, որ հայցվորը ընկերությունը թվով 862 հատ քանակով դեղամիջոց է ներմուծել Ռուսաստանի Դաշնությունից 02.05.2018 թվականին և չի դիմել ՀՀ առողջապահության նախարարություն, չի ներկայացրել ՀՀ Կառավարության 20 սեպտեմբերի 2000 թվականի «Հայաստանի Հանրապետություն դեղերի և դեղանյութերի ներմուծման ու արտահանման կարգը հաստատելու մասին» թիվ 581 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետություն դեղերի և դեղանյութերի ներմուծման ու արտահանման կարգի 28-րդ կետով նախատեսված հայտը և փաստաթղթերը: Դատարանը գտել է, որ քննարկվող դեպքում հայցվորին վարչական պատասխանատվության ենթարկելու համար ժամկետի սկիզբ պետք է համարել իրավախախտման կատարման պահը, քանի որ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 47.3-րդ հոդվածով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է, որպեսզի անձը ՀՀ-ում չգրանցված կամ գրանցումն օրենքով սահմանված կարգով կասեցված կամ օրենքի խախտմամբ դեղեր ներմուծի ՀՀ տարածք: Տվյալ պարագայում գործ ունենք ՀՀ-ում չգրանցված դեղ ներմուծելու հետ, իսկ իրավախախտման ներմուծման պահ է հանդիսանում 02.05.2018-ը, որից 5 աշխատանքային օրվա հաշվարկը լրանում է 10.05.2018 թվականին: Դատարանի գնահատմամբ՝ սույն գործով հայցվորը 02.05.2019 թվականից սկսած՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում պետք է ՀՀ առողջապահության նախարարություն դիմում ներկայացներ՝ համապատասխան հավաստագիր ստանալու նպատակով: ՀՀ առողջապահության նախարարություն դիմում ներկայացնելու համար սահմանված հինգ աշխատանքային օր ժամկետը ավարտվում է 10.05.2019 թվականին, իսկ այդ ժամկետում համապատասխան դիմում չներկայացնելու պայմաններում արդեն համարվում է իրավախախտումը կատարված, իսկ իրավախախտման վերաբերյալ հսկողությունը դրված էր ՀՀ առողջապահության նախարարության վրա, որն էլ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում պետք է բացահայտեր իրավախախտման կատարման փաստը և հարուցեր վարչական իրավախախտման վարույթ: Այնինչ, վարչական վարույթը հարուցվել և իրականացվել է ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդված սահմանված երկամսյա ժամկետի անցած լինելու պայմաններում: Իսկ նման պայմաններում Դատարանը գտել է, որ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից չէր կարող հարուցվել վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ, իսկ հարուցված վարչական վարույթն էլ ենթակա էր կարճման:

Թիվ ՎԴ/4966/05/19 գործով²⁸ Դատարանն արձանագրել է, որ ՎԻՎ օրենսգրքի 47.3 հոդվածի 1-ին մասով սահմանված՝ օրենքի խախտմամբ դեղեր ներմուծելու իրավախախտումն ավարտվում է հենց ներմուծման պահին: Դատարանը նշել է, որ ՎԻՎ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված բացառությունը վերաբերում է այն դեպքերին, երբ իրավախախտումն ունի այնպիսի բնույթ, որը վարչական մարմինների համար արտաքուստ տեսանելի չէ, և անհրաժեշտ է հատուկ ստուգողական միջոցառումների օգնությամբ դա բացահայտել: Ընդ որում, ՎԻՎ օրենսգրքի 37-րդ հոդվածում գործածված «վարչական իրավախախտումը

²⁶ ՎԴ/12381/05/18, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929381

²⁷ ՎԴ/0688/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809930558

²⁸ ՎԴ/4966/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935123

հնարավոր չէր հայտնաբերել առանց համապատասխան ստուգումներ կատարելու» ձևակերպումից հետևում է, որ նշված բացառությունը գործելու համար որևէ այլ իրավական մեխանիզմի, քան ստուգումներ իրականացնելը, վարչական մարմինները չպետք է տիրապետեն: ՎԻՎ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված սեղմ ժամկետի և բացառության խստության հիմքում դրված է իրավական որոշակիության և անվտանգության սկզբունքներից բխող՝ մարդկանց լեզվտիմ ակնկալիքների պաշտպանության անհրաժեշտությունը: Եթե որևէ մեկը վարչական մարմինների համար բացահայտ որևէ գործողություն է իրականացնում և երկամսյա ժամկետում չի ենթարկվում պատասխանատվության, նա ունի լեզվտիմ ակնկալիք առ այն, որ իր կատարած արարքը հակաիրավական չէ: Լեզվտիմ ակնկալիքը չի գործի բնականաբար այն դեպքերում, երբ արարքը տեղի է ունեցել գաղտնի՝ վարչական մարմինների տեսադաշտից դուրս: Այդ դեպքում սովյալ անձը ողջամտորեն չի կարող ակնկալել, որ իր արարքը եղել է իրավաչափ, քանի դեռ վարչական մարմինները հնարավորություն չեն ունեցել դա ստուգելու: Տվյալ դեպքում խոսքը ապրանք ներմուծելու մասին է, որը իրականացվում է Պետական եկամուտների կոմիտեի (ՊԵԿ) իմացությամբ: Ուստի ապրանքներ ներմուծողը ողջամտորեն կարող է ակնկալել, որ եթե առկա լինեն խնդիրներ ապրանքների ներմուծման օրինականության վերաբերյալ, դրանք պետք է առաջանան ներմուծումից հետո՝ ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում: Ներմուծման դեպքում բացառություն կլինի միայն, եթե ներմուծվող ապրանքները թաքցվեն կամ դրանց մասին սխալ տեղեկություններ ներկայացվեն ՊԵԿ-ին: Վիճարկվող որոշմամբ հայցվորին վերագրվել է միայն դեղերն առանց հավաստագրերի ներմուծելը, որը կարող էր և պետք է բացահայտվեր ներմուծումից հետո՝ ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում: Դատարանը նշել է, որ նույնիսկ եթե այլ մարմինների անգործության հետևանքով է բաց թողնվել ՎԻՎ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված երկամսյա ժամկետը, վարչական տույժ այլևս չի կարող նշանակվել: Հայցվորի լեզվտիմ ակնկալիքը բնականաբար չի կարող կախվածության մեջ լինել վարչական մարմինների աշխատակիցների մեղավորությունից: Հայցը բավարարվել է ամբողջությամբ:

Հատկանշական է, որ թիվ ՎԴ/11707/05/18 գործով²⁹ Դատարանը եկել է միանգամայն հակառակ եզրահանգման՝ կապված նշված գործերով ստուգումներ անցկացնելու պարտադիրության հետ և մերժել հայցը: Մասնավորապես՝ հայցվորը նշել է, որ դեռևս 2018 թվականի մայիսի 14-ին ՀՀ առողջապահության նախարարությունը, որպես վարչական մարմին, հատկապես, իսկ սույն գործով պատասխանող Տեսչական մարմինը՝ մասնավորապես, առնվազն 2018 թվականի մայիսի 14-ին տեղեկացվել են հայցվորի կողմից դեղերը ներմուծելու մասին, որպիսի փաստը նաև արձանագրվել է վիճարկվող որոշման մեջ: Վարչական դատարանն արձանագրել է, որ իրավախախտման հայտնաբերման ժամկետ է համարվում 2018 թվականի սեպտեմբերի 10-ն այն հիմնավորմամբ, որ ընկերությունում զննումն իրականացվել է այդ ժամանակ: Դատարանն արձանագրել է, որ ՀՀ-ում չգրանցված (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերի) կամ գրանցումն օրենքով սահմանված կարգով կասեցված կամ օրենքի խախտմամբ դեղեր ներմուծելը կամ արտադրելը կամ պահպանելը կամ բաշխելը կամ իրացնելը կամ կիրառելը առանց ստուգումներ իրականացնելու հնարավոր չէ հայտնաբերել, ինչն էլ նշանակում է, որ ստուգման արդյունքում բացահայտված խախտման համար վարչական տույժը կարող է նշանակվել այն

²⁹ ՎԴ/11707/05/18, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809928679

բացահայտելու օրվանից հետո՝ ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում: Վճիռը բողոքարկվել է հայցվորի կողմից, վերաքննիչ բողոքը բավարարվել է:

Թիվ ՎԴ/12381/05/18 գործով³⁰ Դատարանը նշել է, որ գործով ձեռք բերված ապացույցների հետազոտությունը վկայում է այն մասին, որ ՀՀ տարածք դեղերի ներմուծման անհրաժեշտ ցանկը ՊԵԿ-ի կողմից պատասխանողին է տրամադրվել դեռևս 09.07.2018 թվականին (չնայած այն հանգամանքին, որ մայիս ամսին ՀՀ տարածք ներմուծված դեղերի վերաբերյալ տեղեկատվությունը, համաձայն կարգի, պետք է փոխանցվեր մինչև հունիս ամսվա վերջին աշխատանքային օրը): Վերոնշյալ տեղեկատվությունը, Դատարանի դիտարկմամբ, անհրաժեշտ և բավարար հիմք էր վարչական իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու և ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 251-րդ և 252-րդ հոդվածների կիրառմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու և որոշում կայացնելու նպատակով ապացույցներ ձեռք բերելուն ուղղված գործողություններ կատարելու համար: Հետևապես Դատարանն անհիմն է համարել պատասխանողի այն փաստարկը, որ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 47.3-րդ հոդվածով նախատեսված՝ ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ դեղեր ներմուծելու իրավախախտումը չէր կարող բացահայտվել առանց ստուգում ենթադրող վարչարարական գործողությունների իրականացման: Հայցը բավարարվել է ամբողջությամբ:

Թիվ ՎԴ/12652/05/18 գործով³¹ Դատարանը, հայցը մերժելով, դիրքորոշում է հայտնել առ այն, որ վարչական պատասխանատվության ենթարկելու համար ժամկետի սկիզբ պետք է համարել իրավախախտման հայտնաբերման պահը, քանի որ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 47.3-րդ հոդվածով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է, որպեսզի անձը ՀՀ-ում չգրանցված կամ գրանցումն օրենքով սահմանված կարգով կասեցված կամ օրենքի խախտմամբ դեղեր ներմուծի ՀՀ տարածք, և իրավասու վարչական մարմինը համապատասխան ստուգման արդյունքում հայտնաբերի իրավախախտման կատարման փաստը: Այսինքն, կիրառելի է ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 4-րդ պարբերությունը, քանի որ վարչական իրավախախտումը հնարավոր էր բացահայտել համապատասխան ստուգմամբ որոշակի փաստեր բացահայտելուց հետո: Ընդ որում, Դատարանը նշել է, որ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 4-րդ մասում օգտագործվող «համապատասխան ստուգումներ» բառակապակցությունը չի կարող ենթադրել «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքին համապատասխան ստուգումների անցկացման կարգով ստուգման իրականացում, քանի որ ուղղակի այդ իրավական ակտին հղում կատարված չէ: Կայացված վճռի դեմ ներկայացվել է վերաքննիչ բողոք, որը բավարարվել է:

Իսկ ահա թիվ ՎԴ/11666/05/18 գործով³² դեղերի ներմուծումը տեղի է ունեցել 20.06.2018 թվականին, Տեսչական մարմնի ղեկավարը վարույթ է հարուցել 03.09.2018 թվականին և հայցվորին վարչական պատասխանատվության ենթարկել 10.10.2018 թվականին: Դատարանն արձանագրել է, որ հայցվորը պատասխանատվության է ենթարկվել դեղերի ներմուծման կարգը խախտելու համար, որը վարչական մարմինը հայտնաբերել է վարույթի ընթացքում՝ 31.08.2018թ.: Մասնավորապես՝ հայցվորը ենթարկվել է վարչական տույժի

³⁰ ՎԴ/12381/05/18, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929381
³¹ ՎԴ/12652/05/18, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929675
³² ՎԴ/11666/05/18, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809928663

«Դեղերի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի և 4-րդ մասի, 23-րդ հոդվածի 2-րդ մասի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 581 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետություն դեղերի և դեղանյութերի ներմուծման ու արտահանման կարգ»-ի 5.1-րդ և 34.1-րդ կետերի պահանջների խախտման դեպքի համար՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 47.3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված դրույթի կիրառմամբ, ընդ որում, որոշման 1-ին մասի 1-ին կետով վերջինս ենթարկվել է վարչական պատասխանատվության, մասնավորապես՝ ՀՀ օրենսդրության խախտմամբ ներմուծված նշված քանակներով դեղերի համար: Դատարանը եզրահանգել է, որ պատասխանողը, 31.08.2018թ.-ին հայտնաբերելով հայցվորի կողմից ներմուծված 3 անվանում դեղերի համար ՀՀ պետական սահմանը հատելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ առողջապահության նախարարություն համապատասխանության հավաստագիր ստանալու նպատակով էլեկտրոնային հայտ չներկայացվելու դեպքը, 10.10.2018թ.-ին է կայացրել վարչական տույժ նշանակելու մասին որոշումը՝ պահպանելով Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված ժամկետները, որպիսի պայմաններում Դատարանը գտել է, որ հայցվորի պնդումն առ այն, որ վիճարկվող վարչական ակտն ընդունվել է ժամկետների խախտմամբ, հիմնադրվել է: Ընդ որում, Դատարանի եզրահանգումը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված ժամկետների հաշվարկը 31.08.2018թ.-ից իրականացնելու վերաբերյալ, բխում է սույն վարչական գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի իրավակարգավորման կիրառումից, որից և ակնհայտ է դառնում, որ ենթադրյալ վարչական իրավախախտումը իրավասու վարչական մարմնի կողմից հայտնաբերվել է հենց ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի կողմից էլեկտրոնային ստորագրությամբ վավերացված 31.08.2018թ. գրությամբ, որին կից ներկայացված՝ «Ակադեմիկոս Է. Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից տրամադրված 2018 թվականի հունիս ամսվա դեղերի ներմուծումների վերաբերյալ պահանջվող տեղեկատվության բովանդակությունից է վարչական մարմնին հայտնի դարձել ենթադրյալ իրավախախտման փաստը: Դատարանը հայցը մերժել է: Վճիռը բողոքարկվել է վերաքննության կարգով: Վերաքննիչ դատարանը մերժել է ներկայացված բողոքը՝ վճիռը թողնելով անփոփոխ, նշելով, որ ձեռք բերված ապացույցների հետազոտումից հետևում է, որ վիճարկվող որոշմամբ արձանագրված դեղերը ՀՀ են ներմուծվել և դրանց համար ներմուծման հավաստագիր առկա չի եղել, որով խախտվել է ՀՀ դեղեր և դեղանյութեր ներմուծելու օրենսդրության պահանջները, ուստի Վերաքննիչ դատարանը իրավաչափ է համարել Դատարանի այն եզրահանգումը, որ վիճարկվող որոշումը՝ հայցվորի կողմից որոշմամբ նշված 3 անուն դեղերի մասով, ՀՀ օրենսդրության խախտմամբ ներմուծված լինելու հանգամանքի առկայությամբ վերջինիս վարչական պատասխանատվության ենթարկելու մասով իրավաչափ է, իսկ հայցվորի պնդումները՝ հիմնադրվել:

✓ «Զննում» և «ստուգում» հասկացությունների մեկնաբանությունը.

2 գործով³³ Դատարանը հայցերը բավարարելու մասին վճիռների հիմքում, ի լրումն թիվ ՎԴ/0688/05/19 դատական գործով վճռում արտահայտված պատճառաբանությունների և եզրակացության, անդրադարձել է նաև «զննում» և «ստուգում» հասկացությունների բացահայտմանը:

Դիտարկված դատական գործերից մեկով³⁴ Դատարանն արձանագրել է, որ հայցվորին վերագրված արարքը չի հայտնաբերվել զննման արդյունքում, այլ ի սկզբանե վարչական մարմնին հայտնի է եղել ընկերության կողմից օրենքի խախտմամբ դեղերի ներմուծման փաստը: Այսինքն՝ ենթադրյալ իրավախախտումը հայտնաբերելու համար ստուգումներ անցկացնելու անհրաժեշտություն առկա չէր, ինչը բացառում է ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված նորմի կիրառումը: Դատարանն անհրաժեշտ է համարել անդրադառնալ նաև այն հարցին, թե արդյոք ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 4-րդ մասում նշված «ստուգում» հասկացությունը ներառում է նաև զննումը: Հղում կատարելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածին, նշել է, որ սկզբունքորեն չի բացառվում, որ տարբեր նորմատիվ իրավական ակտերում միևնույն հասկացությունը կամ եզրույթն օգտագործվի տարբեր իմաստներով, սակայն այդ դեպքում ավելի ուշ ընդունված նորմատիվ իրավական ակտում պետք է տրվի այդ ակտի էությունից բխող դրա սահմանումը՝ ելնելով իրավական նորմերի կիրառման միատեսակությունն ու կանխատեսելիությունն ապահովելու անհրաժեշտությունից: Դատարանը նշել է, որ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածը 4-րդ մասով լրացվել է «ՎԻՎ ՀՀ օրենսգրքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-155-Ն ՀՀ օրենքով, որն ուժի մեջ է մտել 13.06.2011թ., ուստի եթե օրենսդիրը նպատակ ունենար «ստուգում» հասկացությանը տալ այլ բովանդակություն, քան սահմանված է «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքով (ուժի մեջ է մտել 01.07.2000թ.), ապա դա հստակ կնշվեր ՎԻՎ ՀՀ օրենսգրքում: Դատարանը պարզաբանել է, որ ի տարբերություն ստուգման, զննումը ոչ թե ինքնուրույն վարչական վարույթ է, այլ դրա ընթացիկ փուլում անհրաժեշտության դեպքում նշանակվող գործողություն, որն իրականացվում է ապացույց ձեռք բերելու, դրա միջոցով գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ պարզումն ապահովելու նպատակով: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ զննումը ստուգման տեսակ չէ, հետևաբար ներառված չէ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 4-րդ մասում նշված «ստուգում» հասկացության մեջ:

Ընդ որում, դիտարկված դատական գործերով զննման արձանագրության մեջ ամփոփված զննման արդյունքները վկայում են, որ զննման արդյունքում՝ օրենքի խախտմամբ դեղերի ներմուծման փաստի առնչությամբ չի հայտնաբերվել որևէ հանգամանք, որը մինչև զննումը հայտնի չի եղել վարույթին իրականացրած մարմնին: Այսինքն՝ առանց համապատասխան ստուգման տվյալ իրավախախտումը հայտնաբերելու անհնարինությունը ոչ միայն հերքվում է զուտ տեսականորեն, այլև փաստացիորեն:

✓ Դեղեր ձեռք բերելիս դրանց՝ ՀՀ-ում գրանցված լինելու կանխավարկածը.

³³ ՎԴ/12063/05/18, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929071; ՎԴ/12643/05/18, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929691

³⁴ ՎԴ/12063/05/18, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929071

Դիտարկված 2 դատական գործերով³⁵ հայցվորները ենթարկվել են վարչական տույժի ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 47.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի պահանջով՝ ՀՀ-ում չգրանցված դեղեր իրացնելու համար այն դեպքում, երբ չեն հանդիսացել դեղեր ներմուծողներ, այլ հանդիսացել են վերավաճառողներ: Նրանք դեղերը ձեռք են բերել ՀՀ տարածքում, ինչը ևս էական նշանակություն ունի դեղերի գրանցման փաստի առումով, քանի որ ՀՀ-ում դեղեր ձեռք բերելիս, ըստ էության, գործում է դրանց գրանցված լիցենզիայի կանխավարկածը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ընկերությունը դեղերի շրջանառության մեջ չի հանդիսացել ներմուծում իրականացնող սուբյեկտ, այլ զբաղվել է դեղատնից դեղերի իրացմամբ, ինչպես նաև այն հանգամանքը, որ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի և Կարգի իմաստով՝ ՀՀ դեղերը և (կամ) դեղանյութերը կարող են ներմուծվել ու արտահանվել ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված ներմուծման կամ արտահանման հավաստագրի հիման վրա, որոնք տրամադրվելու ժամանակ, ի թիվս այլնի, ստուգվում է նաև դեղերի և դեղանյութերի՝ ՀՀ-ում պետական գրանցման առկայությունը և ՀՀ դեղերի և (կամ) դեղանյութերի ներմուծման հավաստագիրը տրվում է մինչև համապատասխան մաքսային հայտարարագիրը ներկայացնելը՝ գործերից մեկով Դատարանը գտել է, որ այդ պայմաններում Հայցվորի՝ որպես դեղատան միջոցով դեղերի առևտրի գործունեություն իրականացնող սուբյեկտի մոտ, կարող էր առկա լինել ողջամիտ համոզմունք առ այն, որ ինքը ՀՀ տարածքում ձեռք է բերել և իրացման նպատակով դեղատանը պահպանել է ՀՀ-ում գրանցված դեղեր: Եթե ձեռք բերումը տեղի չի ունեցել անմիջապես ներմուծողից, ապա վերավաճառքը չի կարող ունենալ ներմուծման հավաստագիր, իսկ ներմուծողը չի կրում բոլոր այն անձանց, ովքեր ձեռք են բերում համապատասխան դեղը, իր կողմից ներմուծված դեղերի ներմուծման հավաստագրի օրինակը տրամադրելու պարտավորություն: Հայցվորին վերագրվող արարքի կատարման մեջ վերջինիս մեղավորության բացակայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ դեղի վրա համապատասխան դրոշմապիտակների առկայությունը փաստում է, որ այդ դեղը ՀՀ է ներմուծվել օրինական ճանապարհով, այսինքն՝ առկա են եղել դրա համապատասխանության ստուգման վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, քանի որ դրանց բացակայությունը կհանգեցներ այդ դեղի ներմուծումն արգելելուն, այսինքն՝ անձն օբյեկտիվորեն զրկված է եղել իր գործողությունների հակաիրավական բնույթը գիտակցելու հնարավորությունից, իսկ մեղքի բացակայությունը հանգեցնում է զանցակազմի բացակայության:

Հատկանշական է, որ երկու գործով էլ Պատասխանող կողմը ներկայացրել է վերաքննիչ բողոք:

Թիվ ՎԴ/5768/05/19 վարչական գործով վերաքննիչ բողոքը բավարարվել է, կայացված վճիռը փոփոխվել, և հայցը՝ մերժվել: Անդրադառնալով այն հարցին, որ ըստ Վարչական դատարանի, դեղերի ներմուծված լիցենզիայի հանգամանքը կարող էր հայցվոր կողմի մոտ ձևավորել ողջամիտ համոզմունք, որ ձեռք է բերել ՀՀ-ում գրանցված դեղեր՝ Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ նախ ըստ զննման արձանագրության, հայտնաբերված դեղերը եղել են առանց համապատասխան դրոշմապիտակի, ինչն արդեն պետք է կասկած հարուցեր դրանց՝ օրինական ճանապարհով ձեռք բերված /ներմուծված/ լիցենզիայի հանգամանքի մասին:

³⁵ ՎԴ/5768/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809936006; ՎԴ/5232/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809935442

Բացի այդ, հայցվոր կողմը, որպես դեղերի իրացմամբ զբաղվող մասնագիտացված բժշկական հաստատություն, կարող էր և պարտավոր էր իմանալ իր կողմից իրացվող դեղերի՝ ՀՀ-ում գրանցված լինելու կամ չլինելու մասին, մասնավորապես՝ ՀՀ-ում գրանցված դեղերի պետական գրանցամատյանի /ռեեստրի/ գրառումների հետ համեմատելու միջոցով, նաև այն փաստի հաշվառմամբ, որ խոսքը գնում է բնակչության առողջությանն առնչվող ապրանքի՝ դեղերի իրացման մասին:

Իսկ թիվ ՎԴ/5232/05/19 վարչական գործով վերաքննիչ բողոքը մերժվել է, և հայցը բավարարելու մասին կայացված վճիռը թողնվել է անփոփոխ հետևյալ հիմնավորմամբ. ՀՀ-ում դեղերի շրջանառության (այդ թվում՝ դեղերի ներմուծման) հետ կապված հարաբերությունները կարգավորող «Դեղերի մասին» ՀՀ օրենքով հստակ ամրագրվել է, որ Հայաստանի Հանրապետությունում թույլատրվում է ներմուծել այն դեղերը, որոնք գրանցված են ՀՀ-ում, իսկ դեղեր ներմուծել թույլատրվում է ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրված ներմուծման հավաստագրի հիման վրա՝ Վերաքննիչ դատարանը հիմնավոր է համարել Դատարանի եզրահանգումն առ այն, որ սույն գործով հայցվորի՝ որպես դեղատան միջոցով դեղերի առևտրի գործունեություն իրականացնող սուբյեկտի մոտ կարող էր առկա լինել ողջամիտ համոզմունք առ այն, որ ինքը ՀՀ տարածքում ձեռք է բերել և իրացման նպատակով դեղատանը պահպանել է ՀՀ-ում գրանցված դեղ: Հայցվորին վերագրվող արարքի կատարման մեջ բացակայում է վերջինիս մեղավորությունը, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ դեղի վրա համապատասխան դրոշմապիտակների առկայությունը փաստում է, որ այդ դեղը ՀՀ է ներմուծվել օրինական ճանապարհով, այսինքն՝ առկա են եղել դրա համապատասխանության ստուգման վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, քանի որ դրանց բացակայությունը կհանգեցներ այդ դեղի ներմուծումն արգելելուն, այսինքն՝ անձն օբյեկտիվորեն գրկված է եղել իր գործողությունների հակաիրավական բնույթը գիտակցելու հնարավորությունից:

✓ *Դեղերի՝ դեղատան վաճառասրահում հայտնաբերված լինելու հանգամանքը որպես իրացում դիտարկելը.*

Դիտարկված գործերից մեկով³⁶ հայցվորը ենթարկվել էր վարչական տույժի ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 47.3-րդ հոդվածի 1-ին մասով, 47.3-րդ հոդվածի 5-րդ մասով (դեղատների առևտրի սրահներում, սպասարահներում պիտանիության ժամկետն անցած դեղեր պահելը), 47.3-րդ հոդվածի 7-րդ մասով (դեղատոմսով բաց թողնվող դեղերի առանց դեղատոմսի իրացումը): Ըստ հայցվորի, գնության արձանագրության մեջ նշված դեղերը հայտնաբերվել են ոչ թե դեղատան վաճառասրահում և եղել են գնապիտակավորված և իրացվել են, այլ գտնվել են դեղատան մենեջերի և հայցվորի աշխատասենյակում (այսինքն՝ ոչ վաճառասրահում) և գնապիտակավորված չեն եղել և չեն իրացվել, այդ թվում՝ նաև ժամկետանց դեղերը: Նույնիսկ էթե դեղերը հայտնաբերված լինեին վաճառասրահում և լինեին գնապիտակավորված ու այդ մասով վարչական մարմնի պնդումները հիմնավորված լինեին, ինքնին վաճառասրահում հայտնաբերումը դեռևս իրացում չէ, այլ իրացման փորձ: Նշված գործով Դատարանը հաստատված է համարել այն հանգամանքը, որ դեղերը հայտնաբերվել են վաճառասրահում՝ հիմնվելով գնման արձանագրության վրա, որում նշված է եղել, որ հանգստի սենյակում դեղեր

³⁶ ՎԴ/11170/05/18, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809928077

չեն հայտնաբերվել, բացի այդ, Հայցվորը, մասնակցելով վարչական վարույթի լուսմներին, չի առարկել այն հանգամանքի դեմ, որ Վարչական մարմնի կողմից դեղերը հայտնաբերվել են վաճառասրահում: Դատարանը, մերժելով հայցը, հղում է կատարել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 510-րդ հոդվածի 2-րդ մասին, համաձայն որի՝ ապրանքի ցուցադրումը վաճառքի վայրում (վաճառասեղանների վրա, ցուցափեղկերում և այլն), դրանց նմուշների ցուցադրումը կամ վաճառվող ապրանքների մասին դրանց վաճառքի վայրում տեղեկություններ (նկարագրություններ, կատալոգներ, ապրանքների լուսանկարներ և այլն) տրամադրելը համարվում է հրապարակային օֆերտա, անկախ այն բանից՝ դրանցում նշված են ապրանքի գինը և մանրածախ առուվաճառքի պայմանագրի մյուս էական պայմանները, թե ոչ, բացառությամբ այն դեպքերի, երբ վաճառողը պարզորոշ սահմանել է, որ համապատասխան ապրանքները նախատեսված չեն վաճառքի համար: Դատարանը գտել է, որ «ՀՀ-ում չգրանցված դեղեր իրացնելը» պետք է մեկնաբանել ոչ միայն դեղերի փաստացի վաճառքը գնորդներին, այլև այնպիսի գործողությունների կատարում, որոնք ուղղված են նշված գործարքի կատարմանը, մասնավորապես՝ հաճախորդներին տեսանելի վայրերում՝ վաճառասրահում, վաճառասեղանների վրա, ցուցափեղկում, ցուցասրահներում ապրանքների տեղադրումը:

2.3 Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու կանոնների խախտում՝ ախտաբանաանատոմիական հերձումների և (կամ) հետազոտությունների անցկացման համատեքստում.

Նշված խնդրով դիտարկված 2 գործերից մեկը բավարարվել է, իսկ մյուսը՝ մերժվել:

Դատարանը ստուգումներ անցկացնելու վերաբերյալ իրավակարգավորումներին է անդրադարձել նաև ախտաբանաանատոմիական հերձումների և (կամ) հետազոտությունների անցկացման վերաբերյալ դիտարկված 2 դատական գործերից մեկով³⁷, որով ՀՀ քննչական կոմիտեի համապատասխան քննչական բաժնի ավագ քննիչը Տեսչական մարմնի ղեկավարին հասցեագրված միջնորդագրով միջնորդել է քննարկել և լուծել հայցվորին պատասխանատվության ենթարկելու հարցը: Տեսչական մարմնի ղեկավարի հրամանով հարուցվել է վարչական վարույթ, իրականացվել են լուսմներ: Ըստ արձանագրության բովանդակության՝ լուսմներին մասնակցել է նաև Բժշկական կենտրոնի ախտաբանաանատոմիական բաժանմունքի բժիշկը (հայցվորը): Վերջինիս նկատմամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն, և ընդունվել վարչական տույժ նշանակելու մասին որոշում՝ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 47.1-ին հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով՝ Ախտաբանաանատոմիական հերձումների և (կամ) հետազոտությունների անցկացումը «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսվող պայմանների խախտմամբ: Դատարանն արձանագրել է, որ Տեսչական մարմնի կողմից իրականացված վարչական վարույթը «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի իմաստով ստուգում չի կարող որակվել, քանի որ այդ վարույթը հարուցելու նպատակ նշվել են ՀՀ քննչական կոմիտեի համապատասխան քննչական բաժնի քննիչի միջնորդագրում նշված փաստական հանգամանքները՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման

³⁷ ՎԴ2/0318/05/18, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809928774

մասին» ՀՀ օրենքով նախատեսված բժշկական փաստաթղթերի լրացման, դրանց պահպանման շրջանառության նկատմամբ և դրանից բխող այլ իրավական ակտերի պահանջների պահպանումը պարզելը, մինչդեռ ստուգումն այլ նպատակ և բովանդակություն ունի: Դատարանը եզրահանգել է, որ վիճարկվող որոշումը կայացվել է ՎԻՎ օրենսգրքի 37-րդ (վարչական տույժ նշանակելու ժամկետները), 247-րդ (ՎԻՎ գործերի վարույթը բացառող հանգամանքները) և 255-րդ (վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության բովանդակությունը) հոդվածների խախտմամբ և առկա է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի «ա» կետով նախատեսված հիմքը որոշումն անվավեր ճանաչելու համար:

Ի տարբերություն վերը նշված դատական գործով վճռին, ախտաբանաանատոմիական հերձումների և հետազոտությունների անցկացման հետ կապված մեկ այլ դատական գործով³⁸ հայցվորի հայցը մերժվել է: Անդրադառնալով հայցվորի այն պնդմանը, որ վիճարկվող ակտում նշվել է միայն «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասը, Դատարանը նշել է, որ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 47.1-րդ հոդվածի 2-րդ պարբերության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ իրավախախտման իրավական հիմքը հանդիսանում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ (ըստ որի վերլուծության, ախտաբանաանատոմիական հետազոտությունների ցանկը և դրանց, այդ թվում՝ հերձումների անցկացման կարգը սահմանված են ՀՀ Կառավարության 20 սեպտեմբերի 2012 թվականի թիվ 1207-Ն և ՀՀ Կառավարության 23 օգոստոսի 2012 թվականի թիվ 1082-Ն որոշումներով) և 3-րդ մասերը: Այն, որ վիճարկվող ակտում բացակայում է վերը նշված հոդվածի 2-րդ մասի վերաբերյալ հիշատակում, Դատարանը նշել է, որ չնայած վիճարկվող որոշման մեջ ՀՀ կառավարության 20.09.2012թ.-ի թիվ 1207-Ն որոշումը չի հիշատակվել, այնուամենայնիվ հայցվորի կողմից խախտվել են «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի պահանջները, քանի որ խախտվել է դրանցով սահմանված Ախտաբանաանատոմիական հետազոտությունների, այդ թվում՝ ախտաբանաանատոմիական հերձումների անցկացման կարգը, հետևաբար այդ մասով ևս վիճարկվող ակտը իրավաչափ է:

Բացի վերը նշվածից, Դատարանը լսված լինելու իրավունքի խախտում է արձանագրել նաև ախտաբանաանատոմիական հերձումների և (կամ) հետազոտությունների անցկացման վերաբերյալ դիտարկված գործերից մեկով³⁹, որով Դատարանը, ուսումնասիրելով վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, արձանագրել է, որ դրանում առկա չէ ենթադրյալ իրավախախտում կատարած անձի ստորագրությունը, ինչպես նաև առկա չէ նշում այն մասին, որ ենթադրյալ իրավախախտում կատարած անձը հրաժարվել է այն ստորագրելուց: Հետևաբար՝ հաշվի առնելով նաև, որ արձանագրությունը Տեսչական մարմնի՝ ղեկավարի հրամանով հարուցված վարչական վարույթի լուսմներից օրեր անց է կազմվել՝ Դատարանը եզրահանգել է, որ նշված արձանագրության կազմմանը չի ապահովվել հայցվորի մասնակցությունը, ինչի արդյունքում չեն ապահովվել նաև վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը կազմելիս դրա վերաբերյալ բացատրություններ տալու

³⁸ ՎԴ/0019/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809929766

³⁹ ՎԴ2/0318/05/18, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809928774

հնարավորությունը, ինչպես նաև Տեսչական մարմինը չի կատարել վերջինիս ՎԻՎ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները բացատրելու պարտականությունը: Դատարանը հանգել է այն հետևության, որ Տեսչական մարմնի վարչական տույժ նշանակելու մասին որոշումը ընդունվել է ՎԻՎ օրենսգրքի 255-րդ հոդվածի խախտմամբ:

2.4 Ընկերության միջոցների հաշվին աշխատողի պարտադիր բժշկական զննում. «Վտանգավոր եվ վնասակար գործոն» հասկացությունների պարզաբանում.

Դիտարկված գործերից մեկով⁴⁰ Դատարանը գտել է, որ հայցվոր Ընկերության աշխատակիցը (Դիմումատուն) գործատու Ընկերության միջոցների հաշվին ենթակա է պարտադիր բժշկական զննման և մերժել է Ընկերության հայցը: Մասնավորապես, հայցվորի վրա Տեսչական մարմնի կողմից պարտավորություն է դրվել դիմում ներկայացրած աշխատակցին՝ ուղարկել պարբերական բժշկական զննության (որոշմամբ տրվել է առաջադրանք, որը վիճարկվել է հայցվորի կողմից Դատարանում): Դիմումատուն աշխատել է Ընկերության «Վերլուծական լաբորատորիա» մասնաձյուղում: Վերջինիս դիմումում ներկայացված քիմիական նյութերից բենզոլ, տետրահիդրոֆուրան, ֆենոլ, ծծմբական թթու, ազոտական թթու, տոլուոլ, քլորոֆորմ նյութերը ներառված են Ընկերության կողմից ներկայացված «Վերլուծական լաբորատորիա» մասնաձյուղում օգտագործվող, կիրառվող քիմիական նյութերի ցանկում: Դատարանը գտել է, որ ՀՀ աշխատանքային օրենսգրքի իրավակարգավորումների ուժով այն աշխատողները, ովքեր աշխատանքի վայրում կարող են ենթարկվել մասնագիտական ռիսկի գործոններին, պարտավոր են աշխատանքի ընթացքում պարբերաբար անցնել բժշկական զննություն՝ գործատուի հաստատած ժամանակացույցին համապատասխան: Ընդ որում, գործատուն է պարտավոր հաստատել այն աշխատողների ցանկը, որոնք ենթակա են պարտադիր բժշկական զննության, իսկ պարտադիր բժշկական զննումը կատարվում է գործատուի միջոցների հաշվին: «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքը և «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքը ևս սահմանել են, որ առանձին ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների աշխատողներն աշխատելու ընթացքում պարտավոր են պարբերաբար ենթարկվել բժշկական հետազոտման, իսկ գործատուները պարտավոր են հատուցել իրենց աշխատողների պարտադիր բժշկական հետազոտությունների անցկացման ծախսերը: ՀՀ կառավարության 15.07.2004 թվականի թիվ 1089-Ն որոշմամբ հաստատվել են աշխատանքային գործընթացի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցությանը ենթարկվող բնակչության առանձին խմբերի առողջական վիճակի պարբերական բժշկական զննության անցկացման կարգը և աշխատանքային գործընթացի վնասակար ու վտանգավոր գործոնների, կատարվող աշխատանքների բնույթի ցանկը, որոնց համաձայն՝ պարբերական բժշկական զննության ենթակա են այն աշխատողները, ովքեր աշխատանքային գործունեության ընթացքում ենթարկվում են արտադրական միջավայրի և աշխատանքային գործընթացի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցությանը: Պարբերական բժշկական զննությունը կատարվում է յուրաքանչյուր 12 ամիսը մեկ անգամ,

⁴⁰ ՎԴ/2803/05/19, http://www.datalex.am/?app=AppCaseSearch&case_id=38562071809932797

որպիսի գննության ենթակա աշխատողների թիվը որոշում է տեսչական մարմինը՝ կազմակերպության տնօրինության հետ համատեղ: Նույն որոշմամբ սահմանվել են վտանգավոր և վնասակար արտադրական գործոնները, որոնց թվում են նաև բենզոլ, տոլուոլ, տետրահիդրոֆուրան, մեթանոլ, ծծումբ, ազոտական թթու, քլորոֆորմ, ինչպես նաև կատարվող աշխատանքների բնույթը, որոնց թվում է նաև կիրառությունը:

Դատարանն արձանագրել է, որ Ընկերության աշխատակցի կողմից կիրառվող քիմիական նյութերը ՀՀ կառավարության 15.07.2004 թվականի թիվ 1089-Ն որոշմամբ հաստատված ցանկում ներառված են որպես աշխատանքային գործընթացի վտանգավոր և վնասակար արտադրական գործոններ, որպիսի գործոնների ազդեցություն է հանդիսանում նաև դրանց կիրառությունը: Ընդ որում, նման գործոնների կիրառության սահմանաչափ սահմանված չէ, որպիսի պայմաններում նշված գործոնների կիրառությունը, անկախ դրանց չափաքանակից, պետք է համարվի աշխատանքային գործընթացի վնասակար ու վտանգավոր գործոնների ազդեցություն, իսկ դրանց ենթարկվող աշխատողները պետք է ենթակա լինեն պարբերական բժշկական գննության: Դատարանն արձանագրել է նաև, որ պարտադիր բժշկական գննումը գործատուի միջոցների հաշվին կատարման ենթակա լինելու պահանջը սահմանված է ՀՀ աշխատանքային օրենսգրքով, իսկ նման գննման պարտադիրությունը սահմանված է ինչպես նույն օրենսգրքով, այնպես էլ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» և «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքներով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դատական գործերի ուսումնասիրության արդյունքում վերհանված հիմնական խնդիրներն առնչվում են վարչական ակտերի որոշակիությանը (հիմնականում՝ դեղերի ներմուծումը մերժելու մասին հրամաններն անվավեր ճանաչելու վերաբերյալ գործերով), ներմուծման իրավախախտման պահը որոշելուն, ստուգման անհրաժեշտությանը, վարչական տույժ նշանակելու ժամկետներին (հիմնականում՝ դեղերի շրջանառության ոլորտի պահանջների խախտման վերաբերյալ գործերով), լսված լինելու իրավունքին, վարչական պատասխանատվության համաչափությանը (հիմնականում՝ սանիտարական, սանիտարահիգիենիկ և սանիտարահակահամաճարակային կանոնների և նորմաների, հիգիենիկ նորմատիվների վերաբերյալ գործերով), պարտադիր բժշկական գննումը գործատուի միջոցների հաշվին կատարման ենթակա լինելու պահանջին (աշխատողի պարտադիր բժշկական գննման հետ կապված գործով):

Դիտարկումը դուրս բերեց Տեսչության գործունեությանն առնչվող այնպիսի առանձնահատուկ խնդիրներ, ինչպես, օրինակ.

ա) օրենքի խախտմամբ դեղեր ներմուծելու իրավախախտման ավարտման պահը դիտարկվում է պետական սահմանը փաստացի հատելու պահի՞ց, թե՞ իրավախախտումը հայտնաբերելու պահից, իրավախախտումը արդյո՞ք հնարավոր չէ հայտնաբերել առանց ստուգումներ անելու,

բ) արդյո՞ք վարչական մարմինների փոխգործակցության թերացումները, անհրաժեշտ տեղեկությունների ստացման խնդիրները կարող են մեկնաբանվել ի վնաս հայցվորի,

գ) արդյո՞ք այն, որ ՀՀ կառավարության թիվ 1089-Ն որոշման մեջ բացակայում է որոշակիությունը, սահմանվում է միայն քիմիական նյութերի ցանկը՝ առանց ներկայացնելու դրանց քանակությունը, միջավայրի պայմանները որոշելու չափանիշները, ըստ այդմ՝ բացասական ազդեցությունը աշխատողների առողջական վիճակի վրա, չի ստեղծում այնպիսի իրավիճակ, երբ նույնական մոտեցում է ցուցաբերվում բոլոր կազմակերպությունների նկատմամբ անկախ նրանցում կատարվող աշխատանքների բնույթից, քիմիական նյութերի քանակից, դրանց օգտագործման նպատակներից և այլն:

Վերը նշված խնդիրների լուծումը որոշ դեպքերում պատշաճ վարչարարության, որոշ դեպքերում՝ միատեսակ իրավակիրառ պրակտիկա ապահովելու, իսկ որոշ դեպքերում էլ օրենսդրական լրացուցիչ կարգավորումների մեջ է: Արձանագրված խախտումների զգալի մասից հնարավոր կլինեն խուսափել՝ վարչական մարմնի կողմից պատշաճ վարչարարության, օրինականության և որոշակիության սկզբունքների պահպանման դեպքում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

Կառավարությանը.

- Լրամշակել պետական մարմինների փոխօգնության մեխանիզմները՝ ապահովելով օրենքով նախատեսված դեպքերում Տեսչական մարմնի համար ժամանակին հասանելիություն ներմուծվող դեղորայքի մասին տեղեկություններին՝ պահպանելով օրենքով երաշխավորված տվյալների անվտանգությունը՝ ապահովելով վարչական պատասխանատվության ենթարկելու ժամկետների պահպանման հնարավորություն:
- Հստակեցնել ՀՀ կառավարության թիվ 1089-Ն որոշման այն կարգավորումները, որոնց հիման վրա իրականացվում է աշխատակցի պարտադիր բուժզննում:

Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին.

- Ապահովել ՎԻՎ օրենսգրքի 37-րդ հոդվածով սահմանված՝ երկամսյա ժամկետում գործի քննությունը իրավախախտումը հայտնաբերելու պահից հաշվարկելու կանոնն այն դեպքերում, երբ իրավախախտումը հնարավոր է հայտնաբերել առանց ստուգումներ անցկացնելու, մինչև ժամանակ բացառել զննում իրականացնելու պարագայում անձին վարչական պատասխանատվության ենթարկելու համար սահմանված ժամկետը ստուգմամբ բացահայտելու օրվանից հաշվարկելու վերաբերյալ իրավակարգավորման կիրառումը, հաշվի առնելով, որ զննումը ներառված չէ ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 4-րդ մասում նշված «ստուգում» հասկացության մեջ:
- Բացառել ՎԻՎ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված երկամսյա ժամկետի խախտմամբ վարչական վարույթի հարուցումը և անձանց վարչական պատասխանատվության ենթարկելը:

- Պրակտիկայում բացառել ստուգմամբ բացահայտման ենթակա իրավախախտումների բացահայտման դեպքում զննում իրականացնելը որպես առանձին միջոցառում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ զննումը ստուգման տեսակ չէ:
- Միջոցներ ձեռնարկել ապահովելու վարչական մարմնի կողմից վարչական վարույթի մասնակիցների՝ լսված լինելու իրավունքի պատշաճ իրացումը, այդ թվում՝ արձանագրությունը իրավախախտի ներկայությամբ կազմելը, իրավունքներն ու պարտականությունները բացատրելը և արձանագրության՝ օրենքի պահանջների համապատասխանելը բովանդակային առումով, ապահովել վարույթի մասնակիցների՝ լսումների մասին պատշաճ ծանուցված լինելու իրավունքը:
- Ապահովել իրավախախտման որոշման կայացումը վարչական իրավախախտման գործը քննող սուբյեկտի կողմից:
- Պարբերաբար ամփոփել դատական պրակտիկան, վերհանել դատարանի կողմից արձանագրված վարչարարության խնդիրները, ապահովել վարչարարություն իրականացնող անձանց իրազեկվածությունը դրանց մասին՝ թույլ չտալու վարչարարության այնպիսի խնդիրներ, որոնց վերաբերյալ առկա է հաստատված դատական պրակտիկա:
- Իրականացնել Տեսչական մարմնի աշխատակիցների պարբերական վերապատրաստումներ, այդ թվում՝ ծանոթացնելով հաճախ հանդիպող խնդիրներին, ձևավորված դատական պրակտիկային: